ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի մայիսի 4-6-ը Օյպեն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Վաչե Տերտերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Օյպեն (Բելգիայի Թագավորություն), 2017 թվականի մայիսի 4-6-ը

4. **Հրավիրող կողմը**

ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

5. **Գործուղման նպատակը**

Մասնակցել «Հաջողված վարչատարածքային բարեփոխումներ» խորագրով միջազգային համաժողովին:

6. **Քննարկված թեմաները**

Համաժողովը մի հարթակում էր համախմբել Եվրոպայի խորհրդի անդամ երկրների շուրջ 100 մասնակցի՝ քաղաքական գործիչներ, փորձագետներ, ակադեմիական փորձագետներ, կենտրոնական իշխանությունների ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Երկրների պատվիրակները ներկայացրեցին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում բարեփոխումների ընթացքը, տնտեսական ճգնաժամով պայմանավորված բարեփոխումները, պատշաճ կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքները և անդրսահմանային տարածքներում

կառավարման նոր մեթոդները (հղումը՝ http://www.coe.int/t/congress/files/events/2017/20170504-gov/default_EN.asp):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովն անցկացվեց կլոր սեղանների ձևաչափով: Բացման խոսքով հանդես եկան Բելգիայի գերմանախոս համայնքի նախարար-նախագահ Օլիվեր Պաշը, Եվրոպական ռեգիոնների կոմիտեի առաջին փոխնախագահ, Բելգիայի գերմանախոս համայնքի սենատոր, ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի փոխնախագահ, եվրոպական սահմանակից ռեգիոնների ասոցացիայի նախագահ Կարլ–Հայնց Լամբերտցը:

Առաջին կլոր սեղանը նվիրված էր տնտեսական ճգնաժամով պայմանավորված բարեփոխումներին: Բանախոսները թեմայի համատեքստում ներկայացրեցին Իտալիայի, Ֆինլանդիայի և Իռլանդիայի փորձն ու տեսակետները:

Երկրորդ կլոր սեղանին քննարկումներ ծավալվեցին ավելի արդյունավետ կառավարման թեմայի շուրջ, որտեղ ելույթով հանդես եկա նաև ես՝ ներկայացնելով Հայաստանում տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումների ընթացքը, առկա մարտահրավերներն ու ձեռքբերումները՝ մասնավորապես անդրադառնալով վարչատարածքային բարեփոխումներին: Նշեցի, որ այդ բարեփոխումները ներառում են մի շարք կարևոր փոփոխություններ՝ ուղղված Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի բարելավմանն ու ամրապնդմանը: Հայաստանի կառավարությունը վճռական է տրամադրված ապագայում ևս ռացիոնալիզացնելու կառավարումը տեղական մակարդակում՝ նպատակ ունենալով ավելի արդյունավետ ու գործունակ դարձնելու վարչական գործընթացներն ու մարդկային ռեսուրսների զարգացումը, բարելավելու մատուցվող հանրային ծառայությունների որակը, հասանելիությունն ու արդյունավետությունը, խթանելու պետական կառավարման և գործընթացների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և վերջապես ստեղծելու բարենպաստ պայմաններ ներդրումային միջավայրի, աշխատատեղերի ստեղծման տեղական տնտեսական զարգացման նախաձեռնողականության և

տարածքային սոցիալ-տնտեսական հավասարաչափ զարգացման համար: Այս համատեքստում իմ երախտագիտությունը հայտնեցի մեր միջազգային բոլոր գործընկերներին, ովքեր աջակցել են մեզ բարեփոխումների ճանապարհին: Մանրամասնորեն ներկայացրեցի համայնքների խոշորացման գործընթացը:

Մեծ աշխատանքներ են տարվել համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրման (ՀԿՏՀ) ուղղությամբ: Այս աշխատանքներն արդյունք էին մասնավոր և պետական սեկտորների գործընկերների համատեղ գործունեության: ՀԿՏՀ-ն դա տեղեկատվական միասնական համակարգ է՝ բաղկացած տարբեր կառավարման համակարգերից, ռեգիստրից, տեղեկատվական ռեսուրսներից, ներքին և արտաքին հաղորդակցման արդյունավետ գործիքներից, էլ. կառավարման բաղադրիչներից, էլ. մասնակցությունից և էլ. ծառայություններից: ՀԿՏՀ-ների բազայի վրա գործարկվել են նաև համայնքների պաշտոնական վեբ-կայքերը: Այս աշխատանքների նպատակն է Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների բարելավումը, համայնքների գործունեության թափանցիկության, հասանելիության ապահովումը և որակի բարձրացումը: 2006թ.-ից սկսած ՀԿՏՀ-ներ են տեղադրվել շուրջ 550 համայնքներում, այդ համակարգով աշխատելու համար վերապատրաստվել են ավելի քան 4000 համայնքային ծառայողներ:

«Մի պատուհան»-ի սկզբունքով համայնքներում ստեղծվել են քաղաքացիների սպասարկման գրասենյակներ՝ համայնքային ծառայությունների մատուցման կենտրոնացման նպատակով: Այժմ գործում են 21 սպասարկման գրասենյակներ, որոնց թիվը կավելանա ևս 11-ով 2017-2018թթ.: Վերջերս քաղաքացիների սպասարկման գրասենյակներում անցկացված հարցումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ քաղաքացիների 92 տոկոսը համաձայն է գրասենյակների բացումից հետո ծառայությունների որակի բարձրացման փաստի հետ: Իսկ այսպես կոչված միկրո-հարցումների գործիքը՝ հանրային մասնակցության նորարարական միջոցը, ևս մեկ ներդրում է տեղական մակարդակում և այն արդեն հաջողված փորձ է համարվում: Նշված գործիքը թույլ է տալիս բջջային կապի միջոցով իրականացնել հարցումներ կարճ հաղորդագրությունների (SMS) տեսքով:

Ելույթիս ավարտին անդրադարձել եմ նաև Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին, որի միջոցներով ևս իրականացվում են համապատասխան զարգացման ծրագրեր, որոնց նպատակը նույնպես տեղական տնտեսական զարգացման խթանումն է և խոշորացված համայնքներում հասարակական ենթակառուցվածքների բարելավումը (տես հղումը):

Բելգիայի Թագավորություն աշխատանքային այցիս ընթացքում հանդիպում եմ ունեցել նաև ԵՄ Արևելյան գործընկերության երկրների տեղական և տարածաշրջանային իշխանությունների համաժողովի (CORLEAP) նախագահ Մարկու Մարկկուլայի հետ: Հանդիպման ընթացքում կարևորել եմ CORLEAP-ի հետ ունեցած մեր համագործակցությունը: Անդրադարձել ենք 2017թ. հոկտեմբերին նախատեսվող հերթական համաժողովին, որը կանցկացվի Երևանում: Զրուցակցիս եմ ներկայացրել Հայաստանում՝ տեղական մակարդակում իրականացվող բարեփոխումների ընթացքը: Մարկու Մարկկուլան իր հերթին կարևորեց Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումները բոլոր մակարդակներում, գոհունակություն հայտնեց Հայկական համանախագահության ընթացքում CORLEAP-ի հետ համագործակցությունից՝ նշելով բարեփոխումների իրականացման և այդ գործում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության առանցքային դերի մասին: Ընդգծեց տարբեր երկրների փորձագետների միջև փորձի և պրակտիկ գիտելիքների փոխանակման կարևորությունը: Նա տեղեկացրեց, որ մոտ օրերս Ռեգիոնների և քաղաքների Եվրոպական շաբաթվա ընթացքում կայանալիք CORLEAP-ի սեմինարը լավ հնարավորություն կընձեռի Երևանում նախատեսվող համաժողովին լավ նախապատրաստվելու համար:

Նկատի ունենալով, որ նախորդ տարի Երևանում անցկացված CORLEAP-ի բարձր մակարդակի համաժողովը մեծ արձագանք ունեցավ տեղական և տարածքային իշխանությունների շրջանակներում, առաջարկեցի այս անգամ համաժողովի քննարկման թեմա դարձնել նաև էլեկտրոնային կառավարման ոլորտում առկա ձեռքբերումները, որի շուրջ տեսակետների փոխանակումը լավ հարթակ կստեղծի ոլորտի հետագա զարգացման համար: Գալիք համաժողովի թեման կարող է ընդլայնվել համայնքների տեղեկատվական բազաներից և ընդգրկել նաև տեղական ու տարածքային տնտեսական զարգացումը՝ ելնելով այն նկատառումներից, որ CORLEAP-ը հիանալի հարթակ է փորձի

և լավ (պատշաճ) կառավարման ոլորտում տեսակետների ու փորձի փոխանակման համար: Վստահեցրեցի, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը դեռ կաշխատի Երևանում կայանալիք համաժողովի թեմատիկ ուղղվածությամբ, այնպես որ այն ոչ միայն տեղեկատվական և կարևոր է հայկական կողմի համար, այլ հավասարապես փոխշահավետ բոլոր կողմերի համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում մասնակից երկրների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցության ներկա մակարդակի խորացման, փորձի փոխանակման և գործակցության ընդլայնման հնարավորությունների շուրջ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Համաժողովի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ավստրիացի և շվեյցարացի գործընկերների հետ հետագա սերտ համագործակցության շուրջ՝ կարևորելով մեզ հետաքրքիր ոլորտներում այդ երկրների անցած ճանապարհն ու փորձառությունը:

10. Գործուղվողը

Վաչե Տերտերյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

16.05.2017թ.